

ճառագայթին, հանդէպ քո առ քեզ անթարթ ակամբք նկատմանց զոչեսցուք միաբանութեամբ ի նուագս ազերսագին թէ Հրամայեա՛ Տէր օրհնութեամբ ասել՝ զբարեհնչումն լուսացոյ բերանոյդ քաղցրութեան՝ զչնորհասփիւռ բարբառ օրհնութեան, ըստ որում յաւուր համբարձման Տեառն մերոյ յերկինս ամբարձ զձեռն իւր աստուածացեալ եւ եղ ի վերայ զլիսոց առաքելոցն եւ օրհնեաց զնոսա ի սուրբ Ձիթենեաց լեւրինն: Նովին եւ նորին օրհնութեամբ ի ձեռն քո օրհնեսցի սա ի հոգի եւ ի մարմին. որպէս օձեալն աստուածային էութեամբ ընդ բնութեանս մարդկայնոյ խառնելով անշփոթաբար ի մի անձնաւորութիւն, նոյն օձմամբ շնորհին ի ձեռն սրբալոյս մեռոնին նիւթոյ Հոգւոյն սրբոյ՝ ի հոգի եւ ի մարմին սորա միացլին: Որպէս եւ առերդ ձրի՝ զնոյն ընձեռեալ շնորհս պարգեւաց ձրի յանուն եւ ի կամս եւ ի փառս միոյ աստուածութեան եւ երրեակ անձին: Յորմէ եւ եպիսկոպոսապետիդ եւ պատուական հայրապետիդ մերոյ վասն փրկութեան հոգւոյ եւ կենդանութիւն խկ շնորհիլ անբասիր եւ անդորր կենցաղավարութեամբ եւ ուղիղ վարդապետութեամբ՝ եպիսկոպոսօք եւ վարդապետօք եւ կրօնաւորօք եւ հնազանդեալ մանկամբք սրբոյ Սիոնիդ ի փառս անախտ եւ անմահ սրբոյ փեսային, որ յամենայն եկեղեցիս սրբոց խնդրին ի ձեռն մաղթանաց օրհնաբանութեան առ ի յիշատակի փրկագործութեան մեր կենարարին, այն՝ որ միշտ օրհնի յամենայն էականաց եւ փառաբանի յերկնայնոց եւ յերկրայնոց Հարբ անսկզբնականաւ իւրով գոյակցաւ եւ Հոգւոյն սրբով էակցաւ եւ փառակցաւ երրեակ անձնաւորութիւնն ի միում աստուածային բնութեան եւ յէութեան ի համապատուին: Եւ այժմ ի սոյն պատճառ եւ անճառելի արտագոչութեամբ օրհնեբզութիւն եւ անլռելի գոհաբանութիւն, շնորհ, պատիւ եւ փառք